# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-ԷՍ-2019/02

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.01.2019թ. թիվ 26-3/92-19 գրությամբ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04226514) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.12.2018թ. թիվ 08/18/18444-18 գրության հիման վրա, 09.01.2019թ. նախաձեռնել է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

## 2. ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ քննչական կոմիտեն 26.12.2018թ. թիվ 08/18/18444-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքված թիվ N ՀՀՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել վերջինիս լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

## 3. «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն 21.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ կարծիքը.

Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը.

2018թ. մայիսի 7-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար աշխատանքների ձեռքբերման «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ քննչական կոմիտեի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի ուժով:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2018թ մայիսի 7-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ քննչական կոմիտեի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի ուժով:

Համաձայն պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Հայտնում ենք, որ մինչև ՀՀ քննչական կոմիտեի կողմից 25.12.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման որոշման կայացմանը՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն բազմիցս գրություններով դիմել է ՀՀ քննչական կոմիտեին՝ վերանորոգման ենթակա տարածքում առկա գույքի, պահարանների և մետաղական չիրկիզվող պահարանների տեղափոխելու խնդրանքով, որպեսզի հնարավոր լինի վերանորոգման աշխատանքները պատշաճ ձևով կազմակերպելու համար, արդյունքում չպատասխանելով մեր կողմից ներկայացված դիմում-խնդրանքներին՝ առաջացել է ժամկետների ուշացման խնդիր:

Այնուհետև, 2018թ. հոկտեմբերի 4-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված 2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 02.11.2018թ.:

Սակայն նորից Պատվիրատուն այդպես էլ անպատասխան թողեց վերանորոգման ենթակա տարածքում առկա գույքի, պահարանների և մետաղական չիրկիզվող պահարանների տեղափոխելու մեր խնդրանքին, արդյունքում 2018թ. դեկտեմբերի 13-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն արդեն ստիպված դիմում ներկայացրեց ՀՀ քննչական կոմիտեի նախագահին՝ հետևյալ բովանդակությամբ. «Համաձայն ՀՀ քննչական կոմիտեի և

«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով կնքված գնման պայմանագրի իրականացվում է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքները: Տեղեկացնում ենք, որ օբյեկտի վերանորոգման համար կազմված ծավալաթերթ-նախահաշվում ներգրավված աշխատանքները իրենց քանակներով չեն համապատասխանում իրական ծավալներին: Մի շարք շինարարական աշխատանքներ ընդհանրապես չեն ներառվել ծավալաթերում, առանց որոնց կատարման անհնար է դառնում օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտը:

Աշխատանքները սկսվելու օրվանից, վերանորոգման ենթակա տարածքում առկա էր գույք, պահարաններ և մետաղական չհրկիզվող պահարաններ, որոնք պետք է տեղափոխվեին այլ տարածք, դրանով հնարավորություն տալով մեզ վերնորոգման աշխատանքները նորմալ ձևով կազմակերպելու համար: Այս մասին մի շարք անգամ դիմել ենք Մալաթիա-Սեբաստիա քննչական բաժնի պետին՝ վերանորոգման ենթակա աշխատասենյակները ազատել տալու և հնարավորություն ընձեռնելու մեզ աշխատելու: Ամեն անգամ մեզ պատասխանել են, որ ազատ մակերես չկա աշխատակազմը և առկա գույքը տեղափոխելու համար և պետք է սենյակ առ սենյակ ազատել, վերանորոգել և նոր միայն տեղափոխել: Այս բոլոր հանգամանքները բացասաբար են անդրադարձել շինարարության տեմպերի վրա:

Աշխատանքները սկսելու օրվանից քննչական բաժնի մուտքային հանգույցի վերակառուցման համար չկար շինարարարության թույլտվություն: Այն մեզ տրամադրվել է վերջերս՝ 03.12.2018թ. (շին թույլտվություն N 01/18-Մ-9612 1163 տրված 16.11.2018թ.): Քանի որ մուտքային հատվածի վերակառուցման աշխատանքները հանգամանքների բերումով պետք է իրականցվեին մեկ ամսվա ընթացքում, առկա եղանակային պայմանները հաշվի առնելով տեխնոլոգիական տեսանկյունից, անհնար է նման ծավալի աշխատանքները իրականացնել այդքան կարճ ժամանակահատվածում: Ուստի նպատակահարմար է դրանց կատարմանը անդրադառնալ գարնանը:

Վերոնշված գրությանը պատասխան չի ստացվել, այլ որպես հետևանք 25.12.2018թ. ՀՀ քննչական կոմիտեի կողմից լուծվել է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1» ծածկագրով պայմանագիրը, որը gnumner.am համացանցային կայքում այդպես էլ չի հրապարակվել և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն պայմանագրի լուծման հետ ծանոթացել է միայն գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է. Սարգսյանին խնդրում ենք նկատի ունենալ, որ 2018թ. մայիսի 7-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1» ծածկագրով պայմանագրով նախատեսված աշխատանքները «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ժամկետում չկատարելու մեջ բացակայում է Ընկերության մեղավորությունը, պայմանագրային պարտավորությունների, իբրև թե, ոչ պատշաճ կատարման պատճառը Պատվիրատուի կողմից թույլ տված բազմաթիվ բացթողումներն են և անգործությունը: Մասնավորապես.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի օբյեկտի վերանորոգման համար կազմված ծավալաթերթ-նախահաշվում ներգրավված աշխատանքները իրենց քանակներով չեն համապատասխանում իրական ծավալներին, ավելին, մի շարք շինարարական աշխատանքներ ընդհանրապես չեն ներառվել ծավալաթերում, առանց որոնց կատարման անհնար է դառնում օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտը:

2. Շինարարական աշխատանքները սկսվելու օրվանից, այն տարածքներում, որտեղ պետք էր իրականացվեր վերանորոգման աշխատանքներ՝ առկա էին գույք, պահարաններ, մետաղական չիրկիզվող պահարաններ և այլն, որոնք խոչընդոտում էին կատարվելիք աշխատանքների իրականացմանը և պետք է Պատվիրատուի կողմից տեղափոխվեին այլ տարածք, դրանով իսկ հնարավորություն ընձեռելով Ընկերությանը՝ վերանորոգման աշխատանքները պատշաճ ձևով կազմակերպելու և իրականացնելու համար:

Այս մասին մի շարք անգամ դիմել ենք Մալաթիա-Սեբաստիա քննչական բաժնի պետին՝ վերանորոգման ենթակա աշխատասենյակները ազատել տալու և հնարավորություն ընձեռնելու՝ մեր աշխատանքները կատարելու համար, սակայն ամեն անգամ Ընկերությանը պատասխանել են, որ ազատ մակերես չկա աշխատակազմը և առկա գույքը տեղափոխելու համար և պետք է սենյակ առ սենյակ ազատել, վերանորոգել և նոր միայն տեղափոխել այլ սենյակ: Այս բոլոր հանգամանքները բացասաբար են անդրադարձել շինարարության տեմպերի և ժամկետների վրա:

3. Աշխատանքների կատարման ժամկետների վրա էական ազդեցությունն է ունեցել նաև քննչական բաժնի մուտքային հանգույցի վերակառուցման համար շինարարարության թույլտվություն ստանալու գործընթացը, որը Ընկերությանը տրամադրվել է միայն՝

03.12.2018թ. (շին թույլտվություն N 01/18-Մ-9612 1163 տրված 16.11.2018թ.), այսինքն՝ 2018թ. հոկտեմբերի 4-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքված համաձայնագրի հիման վրա աշխատանքների կատարման ժամկետը 30 օրացուցային օրով ավելացնելու վերջնաժամկետից հետո: Փաստորեն, վերջնաժամկետը սահմանված էր մինչև 02.11.2018թ., իսկ քննչական բաժնի մուտքային հանգույցի վերակառուցման համար շինարարարության թույլտվությունը ստացվել է 03.12.2018թ.-ին:

4. Եվ վերջապես, 2018թ. հոկտեմբերի 4-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի Կողմերը որոշել են Պայմանագրի Հավելված 2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 02.11.2018թ., իսկ պայմանագիրը լուծվել է պայմանագրի 3.1.4 կետի ա/ ենթակետի ուժով:

Համաձայն պայմանագրի 3.1.4 կետի ա/ ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագրի համաձայն՝ սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև 02.11.2018թ., այսինքն, եթե Ընկերության կողմից մինչև 2018թ. նոյեմբերի 2-ը ավարտին չհասցվեին աշխատանքները, ապա Պատվիրատուի կողմից պայմանագիրը կարող էր լուծվել՝ Պայմանագրի 3.1.4 կետի ա/ ենթակետի ուժով, այն է Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Այս պարագայում Կապալառուն սկսել է աշխատանքները և կատարել աշխատանքների գրեթե կեսը, իսկ ա/ ենթակետի մյուս մասով՝ իբր թե աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, ապա այս մասով՝ հայտնում ենք, որ Ընկերությունը աշխատանքները կատարել է նաև 02.11.2018թ.-ից հետո՝ ամբողջ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին:

Գտնում ենք, որ Պատվիրատուն <<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1>> ծածկագրով պայմանագիրը 25.12.2018թ. չէր կարող լուծել Պայմանագրի 3.1.4 կետի ա/ ենթակետի ուժով:

Վերոշարադրված փաստերը, Ընկերության կարծիքով, վկայում են, որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն ձեռնարկել է բոլոր միջոցները՝ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու ուղղությամբ, սակայն Պատվիրատուի անգործության պատճառով զրկվել է նշված պարտավորությունները ժամանակին կատարելու հնարավորությունից»:

Ի լրումն ՍՑ-ԷՍ-2019/02 ընթացակարգի շրջանակներում ներկայացրած դիրքորոշման, «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 25.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացվել է գրություն, որով Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«2018թ. հոկտեմբերի 4-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված 2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 02.11.2018թ.:

Նշված պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից պետք է կատարվեին նաև մուտքային հանգույցի վերակառուցման և մասնաշենքի ներքին տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքներ, ինչը պահանջում էր համապատասխան շինարարական թույլտվություն:

Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ քննչական կոմիտեին տրված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի (հացսե՝ Ա.Սարգսյան փ., 22-րդ շենք, 2-րդ շինություն) մուտքային հանգույցի վերակառուցման և մասնաշենքի ներքին տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների թիվ 01/18-Մ-9612-1163 թույլատվությունը ստորագրվել է Երևանի քաղաքապետի կողմից միայն 16.11.2018թ., իսկ Ընկերությանը տրամադրվել է միայն 03.12.2018թ., այսինքն, անգամ 2018թ. հոկտեմբերի 4-ին «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքված համաձայնագրի հիման վրա աշխատանքների կատարման ժամկետը 30 օրացուցային օրով ավելացնելու (մինչև 02.11.2018թ.) վերջնաժամկետից գրեթե մեկ ամիս հետո:

Այսպիսով, եթե Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ

դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, ապա նման իրավիճակում ակնհայտ է, որ աշխատանքի (տվյալ մասով) կատարումը ժամանակին չսկսելու և աշխատանքի դանդաղ կատարման պատճառը հենց Պատվիրատուի անգործությունն է եղել, ով Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների կատարման թույլտվությունը տրամադրել է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին պայմանագրով նախատեսված հնարավոր բոլոր ժամկետներն անցնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորությունների խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Արթուր Աբելյանը, Արթուր Պարանյանը և Հասմիկ Ենգոյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2019/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/92-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ քննչական կոմիտեն 26.12.2018թ. թիվ 08/18/18444-18 գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքված թիվ N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով պայմանագիրը, «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի 21.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը և 25.01.2019թ. դիրքորոշման լրացումը.

ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքվել է թիվ N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայամանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-

նախահաշվով նախատեսված ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար:

•1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 05.10.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով:

•3.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

•3.2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

•3.2.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

•4.1 կետի համաձայն՝ կատարված աշխատանքն ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

•5.1 կետի համաձայն՝ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 17400000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

•8.9 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ

մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի N2 հավելվածը հանդիսացող՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Կապալառուի կողմից պետք է կատարվեին հետևյալ անվանումներով աշխատանքների առանձին տեսակներ.

1. Քանդման և մաքրման աշխատանքներ;
2. Պատերի շարվածք;
3. Պատուհաններ և դռներ;
4. Ներքին հարդարման աշխատանքներ;
5. Հատակներ;
6. Արտաքին հարդարման աշխատանքներ;
7. Մուտքային հատված և աստիճաններ;
8. Մուտքային հատվածի տանիք;
9. Ջեռուցում;
10. Ներքին ջրամատակարարում;
11. Ներքին կոյուղու ցանց;
12. Էլեկտրալուսավորություն:

Ընդ որում, աշխատանքների կատարման ժամկետ է նախատեսվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 05.10.2018թ.:

ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքված թիվ N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 04.10.2018թ. կնքվեց N1 Համաձայնագիրը, որով Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված 2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցայի օրով՝ մինչև 02.11.2018թ.:

ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 01.10.2018թ. ստորագրվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 1 արձանագրությունը, որով Պատվիրատուն ընդունել է Կապալառուի կողմից կատարված՝

քանդման և մաքրման, պատուհանների և դռների տեղադրման, ինչպես նաև հատակների աշխատանքները՝ 2139,254 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Այնուհետև, կողմերի միջև 19.12.2018թ. ստորագրվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման ևս մեկ՝ N 2 արձանագրությունը, որով Պատվիրատուն ընդունել է Կապալառուի կողմից կատարված՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքները՝ 3382,092 ՀՀ դրամ արժեքով:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանված ժամկետում չկատարման պատճառ են հանդիսացել Պատվիրատուի կողմից թույլ տվաց բազմաթիվ բացթողումները, որոնք խոչընդոտել են Ընկերության կողմից աշխատանքների պատշաճ և ժամանակին կատարմանը: Մասնավորապես, Ընկերության կողմից նշվեցին հետևյալ պատճառաբանությունները.

«ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի օբյեկտի վերանորոգման համար կազմված ծավալաթերթ-նախահաշվում ներգրավված աշխատանքների տեսակների քանակը չի համապատասխանում իրական ծավալներին, ավելին, մի շարք շինարարական աշխատանքներ ընդհանրապես չեն ընդգրկվել Պայմանագրով նախատեսված ծավալաթերում, ինչն անհնար է դարձրել օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտը:

Բացի այդ, շինարարական աշխատանքներն սկսվելու օրվանից, վերանորոգման ենթակա տարածքներն ազատված չէին գույքից, ինչը ևս խոչընդոտ է հանդիսացել կատարվելիք աշխատանքների իրականացմանը, մինչդեռ Պատվիրատուի ուժերով գույքի ժամանակին տեղափոխումը այլ տարածք, հնարավորություն կտար Ընկերությանը պատշաճ ձևով կազմակերպել և իրականացնել վերանորոգման աշխատանքները: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ նշված հարցի վերաբերյալ բազմիցս դիմել է Պատվիրատուի համապատասխան պաշտոնատար անձանց, սակայն ստացել է պատասխան, որ ազատ մակերես չկա աշխատակազմը և առկա գույքը տեղափոխելու համար և պետք է սենյակ առ սենյակ ազատել, վերանորոգել և նոր միայն տեղափոխել այլ սենյակ և այս բոլոր հանգամանքները բացասաբար են անդրադարձել շինարարական աշխատանքները պատշաճ կատարելու և ժամանակին ավարտելու վրա:

Ընկերության ներկայացուցիչը նշեց նաև, որ Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից- ի թիվս այլ աշխատանքների, պետք է կատարվեին նաև մուտքային հանգույցի վերակառուցման և մասնաշենքի ներքին տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքներ, ինչը պահանջում էր համապատասխան շինարարական թույլտվություն: Ընդ որում, Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ քննչական կոմիտեին տրված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի մուտքային հանգույցի վերակառուցման և մասնաշենքի ներքին տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների թույլտվությունը Երևանի քաղաքապետի կողմից ստորագրվել է միայն 16.11.2018թ., իսկ Ընկերությանը տրամադրվել է 03.12.2018թ., այսինքն, «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի և ՀՀ քննչական կոմիտեի միջև 04.10.2018թ. կնքված համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը 30 օրացուցային օրով երկարաձգված վերջնաժամկետից՝ 02.11.2018թ., գրեթե մեկ ամիս անց»:

«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին ուղղված՝ 25.12.2018թ. թիվ 08/18-203-18 գրությամբ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտը հայտնել է հետևյալը.

«ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 07.05.2018թ. կնքված թիվ N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.3 կետի և N2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ մինչև 05.10.2018թ. Ընկերության կողմից պետք է իրականացվեին Պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով պայմանագրի 8.6 կետի պահանջները՝ Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև 02.11.2018թ. սակայն մինչ օրս շինարարական աշխատանքներն Ընկերության կողմից չեն կատարվել ամբողջությամբ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի պահանջները՝ ՀՀ քննչական կոմիտեն 2018թ. դեկտեմբերի 21-ից միակողմանի լուծել է Պայմանագիրը»:

Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուի կողմից 26.12.2018թ. հրապարակվել է նաև www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքվել է թիվ N ՀՀՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով գնման պայմանագիրը, որի կատարման ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 05.10.2018թ.:

- Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 04.10.2018թ. կնքվել է N1 Համաձայնագիրը, որի համաձայն՝ Կողմերը որոշել են Պայմանագրի Հավելված 2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցայի օրով՝ մինչև 02.11.2018թ.:

- ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 01.10.2018թ. և 19.12.2018թ. ստորագրվել են Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N1 և N2 արձանագրությունները, որոնցով Պատվիրատուն ընդունել է Կապալառուի կողմից կատարված՝ համապատասխանաբար՝ քանդման և մաքրման, պատուհանների և դռների տեղադրման, ինչպես նաև հատակների աշխատանքները՝ 2139,254 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, և ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքները՝ 3382,092 ՀՀ դրամ արժեքով:

- ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի մուտքային հանգույցի վերակառուցման և մասնաշենքի ներքին տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների թիվ 01/18-Մ-9612-1163 թույլտվությունը Երևանի քաղաքապետի կողմից ստորագրվել է 16.11.2018թ., իսկ Ընկերությանը տրամադրվել է 03.12.2018թ.:

- Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի պահանջները՝ ՀՀ քննչական կոմիտեն 2018թ. դեկտեմբերի 21-ից միակողմանի լուծել է Պայմանագիրը, Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 26.12.2018թ. հրապարակելով նաև www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 05.10.2018թ., որը նույն Պայմանագրի շրջանակներում կնքված Համաձայնագրով երկարաձգվել է մինչև 02.11.2018թ., ինչպես նաև այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված՝ ՀՀ քննչական կոմիտեի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի մուտքային հանգույցի վերակառուցման և մասնաշենքի ներքին տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների թույլտվությունը Երևանի քաղաքապետի կողմից ստորագրվել է 16.11.2018թ., իսկ Ընկերությանը տրամադրվել է 03.12.2018թ., այսինքն, Համաձանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը լրանալուց մոտ մեկ ամիս անց, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված պայմաններում Ընկերությունն օբյեկտիվորեն չէր կարող աշխատանքներն սկսել և ավարտին հասցնել մինչև Համաձայնագրով նախատեսված ժամկետի ավարտը:

Վերոգրյալով պայմանավորված Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն՝ Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի հիմքով Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.01.2019թ. թիվ 26-3/92-19 գրությամբ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04226514) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**